

ՆՄՈՒՇՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՌԻ ԹՈՒՐԹԵՐԵՆ ՉԱՓԱԾՈ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ճակատագրի բերումով հայկական ձեռագրերը ցրված են աշխարհով մեկ: Մատենադարանների և մասնավոր հավաքածուների մեզ հայտնի ձեռագրացուցակներում հայատառ թուրքերեն ձեռագրերը զգալի թիվ են կազմում: Մեզ հետաքրքրող ձեռագրերի գերակշռող մասը գտնվում է Երևանում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (շուրջ 300 գրչագիր ու պատահիկ): Այն իրենից ներկայացնում է բանահյուսական, պատմագրական, կրոնաբարոյախոսական, աստվածաբանական, բնական գիտություններին վերաբերող ձեռագրական հարուստ ժառանգություն և ընդգրկում է 600 ամյա մի ժամանակաշրջան: Այս ձեռագրերը գրի են առնվել կամ ընդօրինակվել են Կոստանդնուպոլսում, Տիգրանակերտում, Կոտեց անապատում, Բայազետի բերդում, Ադրիանապոլսում, Եվդոկիայում, Կարինում, Վանում, Անկյուրիայում, Զեյթունում, Պրուսայում, Կյումուշխանեում, Մեքաստիայում, Պետերբուրգում, Էջմիածնում, Աստրախանում, Ղրիմում, Կալկաթայում և այլուր:

Բազմադարյան մշակույթ ունեցող հայ ժողովրդի մտքի, իմաստության, փորձի, ուրախության, սրամտության, վշտի ու տառապանքների, երազների ու ցանկությունների արտահայտությունները Օսմանյան կայսրության թրքախոս գավառներում հնչել են թուրքերեն և գրի են առնվել հայատառ թուրքերենով: Ուստի զարմանալի չէ, որ մեզ չեն հասել որոշ գավառների բանահյուսության և ոչ մի հայերեն նմուշ: Այս հանգամանքն այսօր այնքան հմտորեն օգտագործում են թուրք գիտնականները, ի թիվս այլ երևույթների՝ հայ բանահյուսության շատ նմուշներ ներկայացնելով որպես իրենց սեփականությունը: Թուրքերեն լեզվով լինելու ցավագին այս հանգամանքը, այնուամենայնիվ նպաստել է, որպեսզի ավելի արագ ու դյուրին տարածվեն այս ստեղծագործությունները Օսմանյան միապետության բազմազգ ժողովուրդին:

րի շրջանում, ազդեն թրջախոս ստեղծագործական մտքի վրա, նաև ազդվեն նրանից:

Աշուղական գրականությանը, բանահյուսությանն է վերաբերում հայատառ թուրքերին ձեռագրերի գերակշռող մասը¹:

Հայ աշուղական, գուսանական արվեստի արմատները դարերի խորքից են գալիս, երբ դեռ չէր կազմավորվել թուրքական պետությունը: Վաղ և միջնադարյան հայ գուսանական, աշուղական գրականության ուսումնասիրությանն են նվիրված Մ. Թաղիադյանի, Ղ. Ալիշանի, Մ. Էմինի, Ստ. Պալասանյանի, Հ. Գաթրճյանի, Գ. Զարհանալյանի, Մ. Աբեղյանի, Ա. Զոպանյանի, Ստ. Մալխասյանի, Լևոն Միսրոպի, Հ. Բերբերյանի, Գ. Թարվերդյանի, Գ. Լևոնյանի, Ա. Մնացականյանի, Հ. Սահակյանի, Շ. Գրիգորյանի, Ա. Շահումյալյանի և ուրիշների բազմաթիվ աշխատություններ, հայ տաղերգուների երկերի գիտական հրատարակություններ, որոնք թույլ են տալիս ճիշտ ըմբռնելու մեզ հետաքրքրող հայատառ թուրքերին տաղերն իրենց տարբերակներով: Բանասեր Գ. Լևոնյանը հաշվում է ավելի քան 400 աշուղներ, որոնք ժէ—ԺԹ դարերում ստեղծագործել են միաժամանակ հայերեն և թուրքերեն լեզուներով²: Ընդունված է եղել զանազանել երկու կարգի աշուղներ. աշուղներ, որոնք հանպատրաստից են հորինել ու կատարել իրենց երգերը որևէ գործիքի նվագակցությամբ (մեյտան շուարասը), և աշուղներ, որոնք նախապես գրավոր ունեցել կամ պատրաստել են իրենց տաղերը (քալեմ շուարասը)³: Այնուամենայնիվ դժվար է զանազանել այս աշուղներին, քանզի երկրորդները ևս շատ հաճախ հանպատրաստից էլ են կատարել:

Հաճախ, հոգևոր հայրերը գալթակղվելով աշխարհիկ, ժողովրդական թեմաներով գրված այս տաղերով, ոչ միայն մշակել են և վերափոխել դրանք հոգևոր տաղերի, այլև իրենք էլ ստեղծել են աշխարհիկ բովանդակության երգեր՝ կրոնական նուրբ քողի տակ, գրի են առել ժողովրդի այդ գանձերը, որոնց մի մասն էլ այսօր մեզ է հասել: Ավելին՝ ընդունելով ժողովրդական երգերի ավանդույթները՝ գրել են ժողովրդական, խոսակցական լեզվով, որը հիմնովին տարբերվում էր եկեղեցական լեզու դարձած հին հայերենից՝ գրաբարից: Թրջախոս գավառներում հոգևոր հայրերը երբեմն ստեղծագործել են նաև թուրքերեն, և այդ տաղերը ևս գրի են առնվել հայատառ թուրքերենով: Հաճախ էլ, հայտնի թուրքերեն երգի նույն սիրված մեղեդու համար գրել են հայերեն նոր բառեր՝ նպատակ ունենալով զարկ տալու հայերեն լեզվով երգերի տարածմանը: Մեզ են հասել Հովհաննես Երզնկացու, Հովհաննես

Թիկուրանցու, Թադեոս Թոխաթեցու, Նահապետ Քուլակի, Գրիգորիս Աղթամարցու, Նաղաշ Հովնաթանի, Պաղտասար Դպիրի և ուրիշների հայատառ թուրքերեն տաղերը: Ձեռագրերը, ուր ամբարված են բաղմաթիվ հայատառ թուրքերեն շափածո ստեղծագործություններ՝ թույլ են տալիս միաժամանակ որոշ պատկերացում կազմելու թուրքական շափածո գրականության մասին և հետևել դասական ու ժողովրդական գրականության զարգացմանը:

Թուրքական դասական գրականությունը, ընդօրինակելով արաբա-պարսկական միաստիկ բովանդակությամբ հագեցված ծեփծեփում, վերամբարձ ոճը՝ ստեղծվել ու զարգացել է պալատներում, միշտ հեռու, օտար մնալով ժողովրդին: Պալատական գրականությունը չի արտահայտել իր ժամանակի բնորոշ գծերը, սոցիալ-տնտեսական իրավիճակը: Ավանդական կառուցվածքային ֆորմուլներից դուրս չեկող ստեղծագործություններում չեք գտնի հեղինակի ժամանակակցին: Այս բանաստեղծներից միայն մի քանիսն են, որ վայելել են ժողովրդի սերը:

Աշխարհի բոլոր տիրակալները, թագավորներն ու սուլթանները, ունեցել են իրենց կողքին երգիչներ, որոնց հովանավորել են, սիրել, երբեմն էլ զգուշացել նրանց սուր խոսքերից: Այս երգիչներից ոմանք, ապրելով ճոխ պալատներում, շքեղության մեջ՝ ձգտել են դեպի ժողովուրդը, բնությունը և այնտեղ գտել իրենց հոգեկան հանգստությունը, ազատությունը՝ զերծ կաշկանդումներից: Նրանք դուրս են եկել սոսկ դասական ավանդույթներով ստեղծագործող պալատական երգչի սահմաններից, երգել են երկրային սեր, ժողովրդի հոգսերն ու ուրախությունները, երբեմն էլ ապստամբել են պալատի դեմ, սպառնացել, որի համար այնքան խստորեն պատժվել են:

Թուրք իրականության մեջ, պալատական թուրք երգիչների կողքին ստեղծագործել են շատ սիրված ու գնահատված հայազգի երգիչներ, ինչպես՝ Աբդու Մեջիդ սուլթանի երգիչ Քեշիշօղլին, սուլթան Մահմուդի երգիչ Իւֆեթին և ուրիշներ:

Հայատառ թուրքերեն ձեռագիր տաղարաններում հանդիպում ենք անունների, որոնք թուրք գրականության պատմության մեջ համարվում են դասական գրականության ներկայացուցիչներ, որոնցից մի քանիսի լեզուն, հայկական մտածողության առկայությունը, բովանդակությունը, տաղաչափական կառուցվածքը թույլ են տալիս ենթադրելու դրանց հեղինակների հայ լինելու հանգամանքը: Նույն այս հեղինակների անունները գտնում ենք համապատասխան շրջանի թուրք գրականության մասին աշխատություններում՝ ներկայացված որպես թուրք աշուղներ՝

համապատասխան կենսագրություններով: Այդպիսին են Կաթակլու Ահմեդի⁴, Վասֆի Մահիր Քոչաթուրքի⁵ աշխատությունները, որտեղ գրտնում ենք մեզ հետաքրքրող աշուղների մասին ոչ միայն գրականագիտական տեղեկություններ, այլև, որքան էլ որ զարմանալի է, նրանց նկարները թուրքական հագուստներով:

Ձեռագրերում ամբարված հայատառ թուրքերեն աշուղական տաղերի գիտական, քննական հրատարակությունները ոչ միայն ճշտումներ կմտցնեն նրանց հեղինակների ազգային պատկանելության հարցում, այլև որոշ վերազնահատումների կմղեն: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ աշուղների մեծ մասը կրել են պարսկական անուններ: Երկրորդ՝ նույն անունը կարող էին կրել մի քանի աշուղներ, և երրորդ՝ որ նույն աշուղը կարող էր ունենալ մի քանի անուններ: Այսպես օրինակ, ԺԹ դարի աշուղ Զարուրին մրցութիւններում հաղթելով, ի թիվս այլ աշուղների, նաև հայտնի Թիւճճարիին, ստացել է Քեշիշօղլի մականունը, որը փոխել է Զարուրիի: Կ. Պոլսում մտերմանալով մի թուրք բեյի հետ՝ ներկայացվում է Սուլթան Մահմուդ Բ-ին, որին հանպատրաստից ձոնում է մի տաղ: Առատ պարգևի հետ միասին սուլթանից նա ստանում է նոր մականուն՝ Շավգի⁶:

Հայատառ թուրքերեն աշուղական գրականությունն ուսումնասիրել են օտարազգի հետազոտողներից գերմանացի նշանավոր արևելագետներ էննո Լիտմանը⁷, Օտտո Շպիսը⁸ և ուրիշներ: Թուրք հայտնի գիտնական Ֆուադ Քյոփրյուլյուն իր աշխատություններում անդրադարձել է երեք հայ աշուղների, որոնք գրել են հայատառ թուրքերեն: Դրանք են՝ Մեսիհի էրմենին, Սերգիս Զեքին (Նուռլյան), Միրզա խանը: Ֆ. Քյոփրյուլյուն դրվատանքով է հիշատակում ԺԼ դարի մի այլ աշուղի, ոմն Վարդանի, որն անհամեմատ ավելի տաղանդավոր է եղել, քան վերը հիշատակվածները⁹: Իզզեթ Ուլլին, Ահմեդ Ռասիմը թվում են Ստամբուլի բազմաթիվ հայ աշուղների, որոնք միաժամանակ թուրքերեն են կատարել: Յուսուֆ Նաբիի մի նամակից իմանում ենք ԺԶ դարի երկու հայ աշուղների մասին՝ Վարդան և Մեջնուն¹⁰:

Ահա մի քանի անուններ՝ վերցված հայատառ թուրքերեն տաղարաններից. Պահարի, Սետաէի, Մեվլունի, Ակեահի, Մեքշուֆի, Զահիֆի, Ճեհտի, Շուխի, Էօմեր, Շագիրի, Թանդիրի, Ապիտի, Ֆասլը, Նեպաթի, Հաշիմի, Դարունի, Մահդունի, Սենաթի, Կեվհերի, Սարհօշ օղլու, Մեճնունի, Տեհրի, Իրֆանի, Րավդիա, Նեվնի, Լիճճեյի, Նեֆինի, Նիհատի, Վեհպի, Զիլաայի, Նազիր¹¹, Աբրահամ, Կարաշ օղլան, Դալլաք Մուրադ, Տօնի, Միսկին, Բուրչի, Պետրչի օղլի, Օվլի Նավասի, Մամադ,

Ղամբար օղի, Բեշիշ, Ալավերդի, Մահմուդ, Հարություն Սալմաստեցի¹²:

Աշուղները (հիմնականում սագի նվագակցությամբ) շրջել են Օսմանյան բազմադգ կայսրությունով, երգել, խաղացել, կատարել են իրենց և թե ուրիշների ստեղծագործությունները: Եվ քանի որ թուրքերենը հասկանալի էր բոլոր մյուս ազգերի համար ևս, բնական է, որ լինելով անգամ հայախոս գավառների ծնունդ՝ աշուղները հիմնականում կատարել են թուրքերեն:

Հայատառ թուրքերեն տաղարանների ամենագեղեցիկ նմուշները սիրո տաղեր են, հավաստող դարերից եկած ամենախոր փիլիսոփայությունն այն մասին, որ զգացմունքներից ամենագեղեցիկը վեր է հասարակական սոցիալական, դասակարգային, ազգային ու կրոնական բոլոր պատկանելություններից ու նախապաշարումներից՝ թեև այն ընդվզում է բազմադարյան սովորությունների ու ավանդույթների դեմ:

Տաղերում նկատել ենք կառուցվածքային հետևյալ տարբերակները. — մեկ տողը հայերեն է, մյուսը հայատառ թուրքերեն (երբեմն արաբախառը): Տողերից մեկը մյուսի թարգմանությունն է կամ՝ միմյանց շարունակում են առանց թարգմանության:

Հայերեն երկտողին, քառատողին հաջորդում է հայատառ թուրքերեն երկտողը կամ քառատողը՝ նույն սկզբունքով:

Նույնիսկ հայերեն տաղերում, հայրեններում տեքստը երբեմն ընդմիջվում է հայատառ թուրքերեն բառերով, մտքերով, առանձին քառյակներով, որոնք բովանդակային շարունակություն են կազմում և կամ նախորդի թարգմանությունն են պարզապես:

Մեծ թիվ են կազմում այն տաղերը, որոնց հեղինակները, ստեղծման ժամանակը անհայտ են և որոնց հրատարակությունը մի քանի սովոր հատորներ կարող է կազմել: Դրանց մեծ մասը գեղարվեստական որոշակի արժեք են ներկայացնում: Ահա սիրո տաղի մի օրինակ: «Տաղ Դրիգորի ասացեալի»-ի առաջին մասը երկկիզվյա է:

Ֆիդանէ պաշլատըմ պիւպիւլէր քիպի

(Սոխակների պես ողբալ սկսեցի)

Վարդն է նըստեր ի բարձր որպես թագուհի,

Տաղէրէ կէզէրտիմ պէն մէճլուն քիպի

(Թափառում էի Մեճնունի պես սարերում)

Թապալիմ թապկըլիմ ի վերայ վարդի:

Խարշիտան կէլէն կէօզլերի մէստան

(Դիմացից եկողի աչքերը խումար)

Կամ արեք մօտ յիս կամ տուր պատասխան

Ճիկէր տաղրանտի վուրդուն ու կիրեան

(Զարկված սիրտս ողբաց խռշտանգված)

Արեկ որ նըստիք մէնքիս ի սէյրան
 (Եկ նստենք խինդ ու ուրախության)
 Կէլ սէն հանըմա, եղսւնճա ահան
 (Դու ինձ մոտ արի, մոտ ժամանակներս)
 Զմեզ ուրախացոյ դարկ զմը բուս շէշտէն
 Պիւլպիւլ տէ կէտի՝ պիւլպիւլէ խանտէն
 (Սոխակն էլ եկալ, զվարթ սոխակը)
 Ես եմ խիստ ուրախ ի քո դալըստեանս
 Սաչանիւ դադել ծարուր քաշել ես
 (Գեղեցկուհի, մաղկբիդ ծարուր քաշել ես)
 Լոմն աք մըթըլ, վարդ հոտով, քեաֆուր ես
 (Ճերմակ երեսով, սսկեզօծված, ձյունասպիտակ վարդի հոտով)
 Սինին, աք լուլու կարմիր հաղել ես
 (Ճերմակ կրծքիդ վառ կարմիր ես հաղել)
 Զուսմաք մոտավար նուշ ու շէյ երես
 (Բերանդ կլոր նուշ ու երեսդ խոնավ):
 Է հապիպ դալա դու դիս արիւր բոց
 (Սիրահար մնա, դու գիտ արիւր բոց)
 Մուխաֆ մնացեալ հալրի մի հընոց
 (Շատ խորհրդավոր ես մնացել ի հընոց)
 Էշ շամլը նա տապ մարկարտէ շարոց
 (Նոճու ես նման, ինչպես գոլեմ, մարգարտե շարոց)
 Ըսխիյնիլիք սա ի մեշ վարդենոց
 Է կարմիր բապիտակ դու ոսկի գընդով,
 Էր դարկեր դուն գիտ ալդ շարխի նետով,
 Տապալիմ դեմ դիմացտ ահ կանչեմ ձայնով,
 Դուն ուստի ուսար թուղ ամպ լինելով
 Է վիզըտ շող կուտա, երեստ է փայլուն
 Ուլ ըզբեզ տեսնէ սըրտիկն է յարին,
 Հիվանդ և փափաք եմ ի քո կարաւոտն,
 Արեկ դիս ի տես, իմ հէքիմըն դունս
 Թե չի գաս ի տես, մեղք է քո հոգուն,
 Կու մէշնիմ հալպէթ ի քո կարօտուն,
 Դու ինձ դեղիկ արալ Աստուծոյ սիրուն,
 Իմ սըրտին ռամեկըն և արեըն դունս
 (Իմ սրտի հույսն ու արեըն դու):
 Այդ գեղեցկութիւնդ կու անցանի
 Անճա պիտի լաս ողորմու լալի
 Գիտես թե ինչ խըղճեր արի դու ինձի
 Պագիկ մի պարտ էիր ալվի գտնվի:
 Որ երթամ զանգառիմ իմ գանգատըն դուն
 Էր հանց կու պահես ըզմարդն երեւուն,
 Մաղըրդ և խայտառակ կառնես թըշնամոյն
 Քանց քաղ հազար կալ ճամրով ճիկէր դուն¹³:

Հայատառ թուրքերեն տաղարաններում տեղ են գտել քառյակներ, գաղկններ, բևյթներ, որոնցից մի քանիսի հեղինակներն ամենայն հավանականությամբ հայեր չեն:

Հայատառ թուրքերենով մեղ են հասել բազմաթիվ աշխատանքային, հեթանոսական և քրիստոնեական տոներին նվիրված երգեր (ծաղկազարդի, բարեկենդանի, վարդավառի, համբարձման տոների ժամանակ շուրջպարերի հետ կատարվող երգեր): Այս երգերի մի մասի վառ թատերադրությունը թույլ է տալիս վերարտադրելու որոշ ծիսակատարություններ՝ ամենայն մանրամասնությամբ: Այս առումով անշափ գտնեղ են հարսանեկան երգերը, որոնք բազմաթիվ մասերից են կազմված: Յուրաքանչյուր արարողություն ուղեկցվում է համապատասխան երգով: Բացի թատերական երանգներից՝ դարերի փորձն ու փիլիսոփայությունն են պարունակում ընտանեկան կյանքին վերաբերող երգերը: Դրանք մեղմ ու քնքույշ օրորոցայիններ են, տանտանաներ: Դրանք հատկապես գտնեղ, երգիծական երգեր են, որոնց գործող անձիք հարսերն ու սկեսուրներն են:

Աշուղներն անբաժան ուղեկիցներն են եղել պատերազմների, ապստամբությունների¹⁴, Նրանք երբեմն ամենայն մանրամասնությամբ նկարագրել են դեպքերը, դեմքերը: Այս երգերն իրենցից ներկայացնում են սպառնական, խրոխտ ոճով գրված քայլերգեր: Շատ հաճախ, արշավանքների, մարտերի, ընդհարումների մասին պատմող երգերը թուրքերեն են հնչել նույնիսկ հայախոս գավառներում, որպեսզի թուրքերը ևս լսեն, հասկանան: Բազմաթիվ նման երգեր գրված են ընդդիմախոսությունների հիման վրա, ուր հետաքրքրությամբ երևան է գալիս պայքարող կողմերի նկարագիրը: Թուրքերն այս երգերում տարբեր իրադրություններում տարբեր բնավորության գծերով են հանդես գալիս. վախկոտի դիմաց՝ գոռոզ, պոռոտախոս ու ամբարտաժան, իսկ քաջի հետ հանդիպելիս՝ քծնող ու վախկոտ:

Արագորեն են հյուսվել քաղաքական, երգիծական երգերը, որոնք արագ էլ մոռացության են մատնվել, քանզի նվիրված են եղել որոշակի դեպքերի, առանձին պատմական դեմքերի, իրադարձությունների: Այս երգերը հիմնականում որոշակի ուղղության, կառուցվածքային կանոնների չեն ենթարկվել: Ուղեկցվելով թամպուրայի նվագակցությամբ, կատարվել են խնջույքների, ճամփորդությունների, ուխտադնացությունների ժամանակ: Ժողովրդական բանահյուսության ամենախնամբուխ արտահայտությունները երգերն են, որ կատարվել են տարբեր առիթներով՝ նաև տխուր ու դժբախտ: Մեզ հասած հայատառ թուր-

քերեն պանդխտութեան երգերը կարոտի երգեր են՝ լեցուն ավելի շատ հոռետեսութեամբ, քան թե բարի վերադարձի ու լավ վաստակի հույսով։ Այս երգերը վերաբերում են ոչ միայն պանդխտին, այլև նրան սպասող մորը, հորը, հարազատներին, հարսնացուին։ Մորմոքով լեցուն այս երգերի մի մասը բնականաբար վերաճում է անեծքի՝ ուղղված իրենց դժբախտութեան պատճառը հանդիսացողին։

Կէօզիւնիւն բշշըը աէօյիւնսիւն
Ճիւլէրիւնէ աթեշ տիւշսիւն
Օճաղըն պատսըն
Էվիւն պաշընա երխըսըն։

Ալքիդ լույսը մարի
Հոգիդ կրակ ընկնի
Օջախդ կործանվի
Տունդ գլխիդ փլվի։

Ժողովրդի դառնութիւնների, դժբախտ ու տխուր օրերի երգերից են եղերերգերը, ողբերը, որոնք հիմնականում կատարվել են հանպատրաստից և ունեցել են իրենց որոշակի, ընդունված բովանդակային և կառուցվածքային ձևերը¹⁵։

Ժողովրդական բանահյուսութեան մյուս ժանրերին վերաբերող ստեղծագործութիւնները արդյունք են նաև ժողովրդի մեջ ընդունված՝ ձմեռվա երկար երեկոներին հավաքվելու, պատմութիւններ պատմելու, զբաղվելու, զվարճանալու սովորութեան։ Մեծ թիվ են կազմում առածները, առակները, առասցածքները¹⁶, հեքիաթները¹⁷, վիճակախաղերը¹⁸, թվաբանական խոսելուկները, տաղ-հանելուկները և առած-հանելուկները¹⁹, ոտանավորները²⁰, գուշակութիւնները²¹, պատմութիւնները՝ ընդմիջված երգերով²²։ Այս ստեղծագործութիւններում գերակշռում են չափածո ձևերը։

Ժողովրդի կենցաղի, սովորութիւնների մի այլ կողմի՝ սնտուխ-պաշտութեան արտահայտութիւններն են նաև հմայագրերը։ Ընդունված են եղել հմայագրերի արաբատառ տեքստերը։ Ուստի պատահական չէ, որ հայատառ թուրքերեն հմայագրերին անպայման կից են նրանց աբաբերեն և պարսկերեն տեքստերը²³։

Տրամաբանական պիտի համարել այն երևույթը, որ լոկ հայկական կամ ինքնուրույն ստեղծագործութիւններ կատարելով բանասացները, աշուղները այդքան մեծ հարգանք, սեր ու ժողովրդականութիւն դժվար թե կարողանային վայելել Օսմանյան կայսրութեան նման բազմազգ մի երկրում։ Նրանք մեծ դեր են խաղացել նաև պետութեան մյուս ժողովուրդների բանահյուսութեան տարածման, կատարման, մշակման, նոր տարբերակներ ստեղծելու գործում։ Այդ են վկայում տարբեր ժանրերի ստեղծագործութիւններին կից (ոմանց) պարսկերեն, հայատառ

պարսկերեն, թաթարերեն, հունարեն, եբրայերեն, լատիներեն, հունգարերեն (մաճառերեն), հայատառ քրդերեն, օսմաներեն, հայատառ արաբերեն, մոլդավերեն զուգահեռ տարբերությունները:

Հայատառ թուրքերենով մեզ են հասել ոչ միայն այլազգի և այլալեզու աշուղների ստեղծագործությունները, այլև նրանց ժողովուրդների բանահյուսության մի շարք նմուշներ: Արևելքում տարածված սիրավեպերի առկայությունը հայատառ թուրքերեն ձևագրերում ապացույց է այն բանի, որ դրանք մեծ սիրով պատմվել, երգվել են նաև հայկական շրջաններում, գրի են առնվել հայատառ թուրքերենով: Շահ Իսմայիլի, Ասլիի և Քյարամի, Աշուղ Ղարիբի, Քյոռ Օղլու, Խան Չոբանի, Թահիր Միրզայի պատմություններն առատորեն ընդմիջված են բազմաթիվ երգերով²⁴:

Հոգևոր, կրոնաբարոյախոսական բնույթի ամենավաղ հայատառ թուրքերեն նմուշները ԺԶ—ԺԷ դարերին պատկանող օրհնություններ և աղոթքներ են²⁵: Հատկապես թուրքաշատ վայրերում հայերն ազատ չէին իրենց մայրենի լեզուն օգտագործելու: Մահվան սպառնալիքով, լեզուն կտրելով՝ արգելվում էր խոսել հայերեն: Նույնիսկ քարոզը եկեղեցում կատարվում էր թուրքերեն՝ հասկանալի լինելու թուրքախոս հայերին: Բացի առօրյա եկեղեցական ծիսակատարություններին վերաբերող ձեռագրերից, հայատառ թուրքերենով պահպանվել են կրոնաբարոյախոսական պատմություններ²⁶, հոգևոր տաղեր²⁷, եկեղեցիների պատմություններ վերաբերող ձեռագրեր²⁸, վարք սրբոց²⁹, խրատներ³⁰, հայսմավուրք³¹, ախտարք³², ճաշոց³³, եկեղեցական գրադրության օրինակներ³⁴, ամուսնական դաշնագրերի պատճեններ³⁵, անդորրագիրք և կահագիրք³⁶, ճառեր³⁷, կրոնական տաղեր³⁸ և այլն:

Նրկլեզվյան՝ հայերեն և հայատառ թուրքերեն տեքստերը հիմնականում թարգմանություններ են՝ կատարված լատիներենից, իտալերենից, արաբերենից: Հետաքրքրություն են ներկայացնում բժշկարանները. օրինակ՝ իտալերենից թարգմանված եռամաս մի բժշկարան, որը ԺԸ դարի ձեռագիր է³⁹ և կազմված է բնախոսության, ախտահանության, ախտորոշման բաժիններից: Բժշկարաններն ունեն առողջապահությանը, մարդակազմությանը, բույսերի բուժիչ հատկություններին նվիրված մասեր:

Հետաքրքրություն է ներկայացնում, կարծում ենք, «Պատմութիւն գիւտոյ Ամերիկայի» ձեռագիրը⁴⁰:

Գիտություններին վերաբերող ձեռագրերն, ի տարբերություն նմանատիպ հայերեն ձեռագրերի՝ անհամեմատ աղքատ են, ոչ միայն քա-

նակով (մոտ 40), այլև ընդգրկման շրջանակներով: Ժէ դարից սկսած հանդիպում ենք քիմիային⁴¹, թվաբանությանը⁴², աստղաբաշխությանը⁴³ նվիրված ձեռագրեր: Համեմատաբար շատ են բժշկության, մարդակազմության, դեղագործության⁴⁴ մասին ձեռագրերը: Կան նաև թանաք պատրաստելու⁴⁵, տարբեր գույներ ներկելու միջոցների մասին⁴⁶ նամակների և պարտամուրհակների օրինակներ⁴⁷: XVIII—XIX դդ. Օսմանյան կայսրության տնտեսական, առևտրական կապերի վիճակի առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Կոստանդնուպոլսի մաքսատան սակացույցները⁴⁸:

Պատմությանը վերաբերող հայատառ թուրքերեն ձեռագրերի թիվը մոտ 20 է՝ «Պատմութիւն Օսմանեան թագաւորաց»⁴⁹, «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացւոյ»⁵⁰, «Պատմութիւն Նադիր շահին»⁵¹, «Պատմութիւն Լուիֆիկ թագաւորին»⁵²: Վարքագրական բնույթի են «Պատմութիւն Գրիգոր Լուսաւորիչին»⁵³, «Պատմութիւն Նղիայի Խարբերդացւոյ»⁵⁴, «Վարք և պատմութիւն ի Դաշտիկ ժողովողի գրոց»⁵⁵, «Պատմութիւն նահատակութեան Ապունաթումայ»⁵⁶: Պատմական բովանդակության ձեռագրերից են՝ «Գիրք պատմութեան ընդդէմ Փափապաշտից»⁵⁷, Գրիգոր Դարանազցու երկը⁵⁸, ուղերձներ⁵⁹ և այլն:

Հայատառ թուրքերեն ձեռագրերի թվում են «Պատմութիւն Փարէղու և Վենայի»⁶⁰ միջնադարյան ասպետական ամենահայտնի և ամենասիրված ստեղծագործությունը՝ ժամանակին թարգմանված աշխարհի տարբեր լեզուներով (թարգմանիչն է Նրեմիա Քյոմուրճյանը), և Նրեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն Տիմօի»⁶¹ լիթիկական պոեմի հայատառ թուրքերեն տարբերակը: Հետաքրքրական է մ.թ.ա. է դարում, ասորա-բաբելական միջավայրում ստեղծված հաղվագյուտ, հմայիչ գրական մի հուշարձանի՝ «Նիկարի զրույց»-ի հայատառ թուրքերեն տարբերակի առկայությունը: Այն ստեղծվել է թրքախոս հայերի միջավայրում՝ թարգմանվելով զրույցի հայերեն տարբերակից⁶²: Այսպիսով, «Նիկարի զրույցը» երևան է եկել նաև թուրքալեզու գրականության մեջ:

Այս ձեռագրերում ևս հանդիպում ենք հայերեն գրված մասերի: Դրանք երբեմն հայատառ թուրքերեն բնագրի թարգմանություններն են, երբեմն՝ ուղղակի հայատառ թուրքերենը ընդմիջվում է հայերենով, իսկ հաճախ նաև՝ հայերեն հատվածներն արտահայտում են նախորդ՝ հայատառ թուրքերեն հատվածների համառոտ բովանդակությունը: Եթե ձեռագիրը երկլեզվյա է, հաճախ մեկ թերթի վրա տրվում են միանգա-

մից երկու զուգահեռները, ինչպես հանդիպում ենք ավետարաններում⁶³,
քարոզներում⁶⁴:

Վերը նշված համարյա բոլոր ձեռագրերը հետագայում բազմաթիվ տպագրություններ են ունեցել, թեև քիչ չեն նաև այն ձեռագրերը, որոնք պատմական, գիտական և գեղարվեստական արժեք են ներկայացնում, անտիպ են և կարոտ հետազոտման: Այս առումով, պատմական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Թումա (Թումա) վարդապետի մահվան առթիվ գրված հայատառ թուրքերեն «Վասն Թումայի վարդապետի Կոստանդնուպոլսի պատրիարքի, որ հտուն սպանանել»⁶⁵ տաղը՝ նվիրված 1657 թ. աթոռակալների⁶⁶ միջոցով սպանված Կ. Պոլսի պատրիարք Թումա Հալեպցուն: Տաղն անանուն է, գրված առաջին դեմքով՝ Թումայի անունից և նման բնույթի հայատառ թուրքերեն մեզ հայտնի միակ գործն է: Հայ միջնադարյան պանդխտության երգերին հատուկ ձևով է նկարագրվում մահվան սնարում շուրջը ոչ մի բարեկամ չտեսնող Թումայի կարոտը, վիշտը, մորմոքն ու ողբերգական վիճակը: Ահա այդ տաղը՝

Տաղ վասն Թումայի վարդապետի Կոստանդնուպոլսի պատրիարքի,
որ հտուն սպանանել

Թումայ էյ տէր, սուշում նէ տիր կիւնահըմ պիլինմէզ,
(Թուման ասում է, հանցանքս ի՞նչ է, մեղքս ի՞նչ է, չի իմացվի)
Աքար պէնիմ շէշիմ հաշի սիլինմէզ,
(Կհոսի իմ արտասուքը և չի սրբվի)
Պու տիհարտէ էհլի իման պուլունմազ
(Հավատացյալ չի գտնվի այս երկրում)
Եւա էլլէրտէ կալտըղմի աղլէրիմ:
(Ողբում եմ, որ օտարության մեջ եմ մնացել)
Քահպէ ֆէլէք պիզէ վէրմէտի էման
(Ստոր աշխարհը մեզ աման⁶⁷ չտվեց (փրկություն չտվեց)
Հէթայ կէլտի պաշըմըզայ պէկումէն,
(Անսպասելի փորձանք եկավ մեր գլխին)
Պաղլանըպ գընտանէ կիրտիկիմ գէման
(Երբ կապոտած զնդան նետեցին)
Քարանլըքտայ կալտըճաղըմ աղլէրէմ:
(Ողբում եմ, որ խավարի մեջ մնացի):
Ղարիպ կեօնկլում, տուշմէտի պիր էլայն,
(Պանդուխտ հոգիս ոչ մի դադար չունեցավ)
Նէ կեահտէն տըքտըլար պէնի կուլայն,
(Այն ժամանակվանից, երբ ինձ շղթայեցին)
Եալնըզնա կալտըղմը աղլարմ:

/Ողբում եմ մենակ մնալու համար)
 Պիտ իբի մընաֆըք կիրտի քանըմայ,
 (Մի երկու ոսոխ մահու տվեցին)
 Եարանլերիմ պուլունմատի կանըմայ,
 (Փրկողներ ինձ շնորհեցան)
 քնաֆիր զիմինլեր⁸³ կիրտիլեր քանըմէ,
 (անհավատ զիմինները արյունս թափեցին)
 հէսրէթիլէ օլտիճէիմ աղլարէմ:
 (ողբում եմ կարոտով մահանալու համար):
 Պէնիմ ահըմ էտէնլերէ քալմասըն,
 (Թող նրանց այդ շնորհի)
 տունեսսընտէ էհրէթինտէ կիւլմեսըն,
 (ոչ այս, ոչ այն աշխարհում չուրախանան)
 տէվրի քըհայմեթտէ իման պուլմասըն,
 (ահեղ դատաստանի ժամին ներում չգտնեն)
 մուրատըմայ էրմէտիմ աղլարըմ:
 (Ողբում եմ, որ նպատակիս չհասա):
 Աղլատը կէօղլերիմ քան հաշ աղլատը,
 (Աչքերս արտասովում են, արյուն արցունք թափում)
 աճի սօղլէր ճիկէրճիիմ տաղլատըյ
 (դառը խոսքերն այրեցին հոգիս)
 զալըմ ճէլատ քօլլարըմլ պաղլատըյ
 (անխիղճ դահիճը թերս կապկպեց)
 հատ էլլերտէ օլտուկումլ աղլարըմ:
 (ողբում եմ պանդխտության մեջ գտնվելու):
 Պաք շու պաշըմըղայ կէլէն պու իշլէր,
 (Տես մեր գլխին եկածները):
 քնաֆիր կէօրսէլ պէնի կունահըմըղ պաղըշլեր,
 (անհավատն անգամ ինձ տեսնելով մեղքերիս թողություն կտա)
 խայիրէ տօնմէտի կիօրտուկումըղ տուշլէր
 (տեսած երազներս բարի ավարտ շունեցան)
 հատ էլլերտէ օլտուկումլ աղլարէմ:
 (ողբում եմ պանդխտության մեջ գտնվելու)
 Սէլամ էլլէն վալիտէմէ, կարտուշըմէ
 (Բարե տարեք իմ մորն ու եղբորը)
 թիրլի թիրլի հալլար կէլտի պաշըմէ,
 (տեսակ տեսակ փորձանքներ եկան գլխիս)
 զէհրլէն աղը կաթտըլար աշըմայ
 (կերակուրիս մեջ դառը թույն խառնեցին)
 հատ էլլերտէ օլտուկումի աղլարէմ:
 /ողբում եմ պանդխտության մեջ գտնվելու համար):
 Եարանլարըմ հիտամ սիզի սաքլասըն,
 (Բարեկամներ, աստված ձեզ պահապան),
 հէպար էլլէն քարտաշլարըմ աղլասըն

(հայտնեցեք եղբայրներիս, թող ողբան)
 հեմշիրէմ վալիտէմ սիւահ պաղլասըն,
 (քույրս ու մայրս սեւեր թող հագնեն)
 պիր քերէճիկ կէօրմէքտիկիմ աղլարմ:
 (ողբում եմ, որ մեկ անգամ էլ չտեսա):
 Վատէմ յէթտի պու տիւարտէն կեօջօլտըմ
 (ժամս հասաւ, այս աշխարհից հեռանում եմ)
 դերտիմիզ պիրիքեն արթը յիւզ օլտը,
 (մի վիշտ ունեինք, հարյուրը դարձաւ),
 եաղըք պէնիմ էմէճիմ հէշ օլտը,
 (ափսոս իմ գործը ի շէք դարձաւ),
 օնուն իշուն պէն տահիյան աղլարմ:
 (դրա համար ես շարունակ ողբում եմ):

Հայատառ թուրքերեն ձեռագրերի հրատարակությունները, քնա-
 գրերի քննական ուսումնասիրությունները հետաքրքիր արժեքների, վե-
 րագնահատումների առիթ կտան: Ձեռագրեր, որոնք սպասում են իրենց
 մշակներին:

А. СТЕПАНЯН

ОБРАЗЦЫ ПОЭТИЧЕСКОЙ АРМЕНОПИСЬМЕННОЙ ТУРКОЯЗЫЧНОЙ ЛИТЕРАТУРЫ

Р е з ю м е

Арменописьменные туркоязычные рукописи разбросаны по
 всему миру, но подавляющее большинство их хранится в Ереван-
 ском Матенадаране им. Месропа Маштоца (около 300 рукопи-
 сей и фрагментов). Записаны они в разные периоды в разных
 армянских культурных и религиозных центрах на протяжении
 600 лет. Это богатое наследие содержит образцы фольклора,
 ашугской поэзии, художественных произведений, религиозно-ди-
 дактических, теологических рукописей, а также трудов по разным
 наукам. Эти рукописи, в основном, малоизучены и ждут много-
 стороннего исследования, так как большинство из них пред-
 ставляет определенный интерес в плане историческом, художест-
 венном и научном.

В данной статье наряду с подробной характеристикой поэ-
 тической арменописьменной туркоязычной литературой впервые
 публикуется два ее образца—тага (стиха): любовный таг Гри-
 гора и исторический таг о гибели константинопольского армян-
 ского патриарха Товмы Алеппского в 1657 г.

- 1 Երևանում, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավելի քան 180 ձեռագրեր պարունակում են հայատառ թուրքերեն տաղեր, բանահյուսության նմուշներ։
- 2 Գ. Առնյան, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 34։
- 3 Ա. Ալաջյանեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրե, 1937, էջ 1554։
- 4 Ahmet Kabaklı, Türk Edebiyatı, Ankara, 1967, s. 139, 633.
5. Vasfi Mahir Kocatürk, Türk Edebiyat Tarihı, Ankara, 1970, s. 426, 474, 498, 584.
- 6 Ա. Ալաջյանեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, էջ 1556։
7. Enno Littmann, Das Malerspiel, Sitzungsberichte der Heidelger Akademie der Wissenschaften, Phil. hist., Kl., 1910.
- Նույնի, Ein türkisches Streitgedicht über die Ehe, „Bidārini Evil ile Bekaryn dasıltany“. (D A volume of Oriental Studies presented to Professor Edvard G. Browne" pp 269—284.
- 8 Otto Spies. E-man und Zejdschan. „Ein türkischer Volksroman aus Kleinasien nach einem armenisch-türkischen Druch.) Änthropos, t. XX, 19253.
- 9 Fuad Köprülü. Türk Edebiyatının Ermeni Edebiyatı üzerindex: Teşvratı, Edebiyyat Fakültesi Mecmuası", İstanbul, 1922; Fuad Köprülü, Ed. biyat Araştırmaları, Ankara, 1966, s. 239—269.
- 10 Խ. Ամիրջան, Հայ մշակույթի պատմության նենգախոսման հարցի շուրջ, Երևան, Մոլոխտական գրականություն» ամսագիր, 1972, № 3։
- 11 Մատենադարան, ձեռ. 6438։
- 12 Անդ, ձեռ. 9003։
- 13 Անդ, ձեռ. 2394, էջ 182ա—184ա, տաղն անտիպ է, թարգմանությունը մերն է։
- 14 Աշուղների ստեղծագործություններին տարբեր զավառներում տարբեր անվանումներ են տրվել, Օրինակ, Զելթունում ավաղներ են անվանվել աշուղների մարտական, նաև հովվերգական երգերը։
- 15 Մատենադարան, ձեռ. 3300։
- 16 Մատենադարան, ձեռ. 5941, 1400, 2163, 8048, նաև Յ. Թփեքեան, Յուզակ հայերեն ձեռագրաց Արմաշի վանքին, ձեռ. 158, էջ 2ա—163, «Աղվեսագիրք» (163 առակ)։
- 17 Մատենադարան, ձեռ. 157։
- 18 Անդ, ձեռ. 1675, 10264։
- 19 Անդ, ձեռ. 1786, 3442, 5373, 5616։
- 20 Անդ, ձեռ. 3830, 3998, 9117, 9404, 10097։
- 21 Անդ, ձեռ. 10262, 5941։
- 22 Անդ, ձեռ. 9074, 6657։
- 23 Անդ, ձեռ. 9906, 10284։
- 24 Անդ, ձեռ. 2842, 7318, 9003։
- 25 Անդ, ձեռ. 362, 1644, 1679, 1856, 2274, 3506, 5613, 8469։
- 26 Անդ, ձեռ. 9705, 10136։
- 27 Անդ, ձեռ. 5084, 1823, 3443, 6744, 8277, 8469, 8504, 9138։
- 28 Անդ, ձեռ. 2861, 6744, 8504։
- 29 Անդ, ձեռ. 5084, 7868, 9073, 9643, 10061։

- 30 Անդ, ձև. 1670, 6703, 9117, 10036:
- 31 Անդ, ձև. 2906, 6817, 7543:
- 32 Անդ, ձև. 8823, 9008, 9717:
- 33 Անդ, ձև. 4656:
- 34 Անդ, ձև. 517, 1670, 1856, 2861, 3476, 5043:
- 35 Անդ, ձև. 2614, 7265:
- 36 3. Տաշեան, Ցուցակ հայերեն ձևազարդ Մխիթարեան մատենադարանին ի վիճակ, ձև. 441:
- 37 Քէշիշեան, Ցուցակ հայերեն ձևազարդ Զմմառի վանքի մատենադարանին, ձև. 176 (ԺՀդ.). Ղուկաս Փինէլոստա Յիսուսեան կարդինալի «Քիթապ քի, անտէ սէոյ-լէնիր կէլէճէք օմրութէն օթրու» (Գիրք՝ յորու ճառի զհանդերձեալ կենաց):
- 38 Մատենադարան, ձև. 2065:
- 39 Մատենադարան, ձև. 9711:
- 40 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձևազարդ սրբոց Յակոբեանց, ձև. 14:
- 41 Մատենադարան, ձև. 131, 6463, 10183:
- 42 Անդ, ձև. 524:
- 43 Անդ, ձև. 6420, 9713:
- 44 Անդ, ձև. 159, 1129, 4026, 5538, 9559, 9878, 10046:
- 45 Անդ, ձև. 459, 1387:
- 46 Անդ, ձև. 9677:
- 47 Անդ, ձև. 1803, 10186:
- 48 Անդ, ձև. 8015, 8016:
- 49 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձևազարդ սրբոց Յակոբեանց, ձև. 14:
- 50 Մատենադարան, ձև. 6891:
- 51 Անդ, ձև. 2722:
- 52 Անդ, ձև. 10247:
- 53 Անդ, ձև. 8219 և ձև. 8988՝ Պաղտասար Դպիր. «Վարք Գրիգոր Լուսավորիչի»:
- 54 Անդ, ձև. 6891:
- 55 Անդ, ձև. 8049:
- 56 Անդ, ձև. 2622:
- 57 Անդ, ձև. 1911:
- 58 Անդ, ձև. 9704, էջ 1ա—5ա, «Պատմութիւն յաղագս առնելոյն տաճկաց զՍուրբ Նիկողայոս Լկեղեցին ի ձևազարդ հայոց եւ տալոյն զկնի միոյ տարւոյ զՍուրբ Հրեշտակապետ Լկեղեցին իոխանակ նորին» և «Պատմութիւն յալմէ վասն նոյն սուրբ եկեղեցւոյն, Գրիգոր վարդապետ կոչեցեալն Պարօնտէր, որ երբեմն էր պատրիարք սրբոյ Երուսաղէմի յամի տեառն 1631: Նա զամենայն անցան իւր և զոր ինչ ետես վասն Պալատու Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն գրեաց այսպէս» (հեղինակ Գրիգոր Դարանաղցի), էջ 5բ—10բ:
- 59 Անդ, ձև. 4494:
- 60 Անդ, ձև. 9700:
- 61 Անդ, ձև. 1456:
- 62 Պատմութիւն եւ խրատք երկարայ Իմաստնոյ, գիրք Ա (գիտական հրատարակութիւնը Ա. Մարտիրոսյանի), Երևան, 1969, էջ 303—325 «Ալիմ երկարն սոլլատիկի նասիհաթ» (զտնվում է Զմմառի վանքում, ձև. 413):

63 Մատենադարան, ձեռ. 5047:

64 Անդ, ձեռ. 7044:

65 Անդ, ձեռ. 7717, էջ 128ր—129ր, ձեռագիրն անտիպ է, թարգմանությունը մերն է:

66 Քանի որ Կ. Պոլսի պատրիարքարանք իրենից ներկայացնում էր ոչ միայն հոգևոր, այլև արևմտահայության համար նաև քաղաքական իշխանություն և տնօրինում էր նյութական մեծ կարողություն, ուստի և միշտ էլ սուր պայքար է մղվել պատրիարքական աթոռին տիրանալու համար: Պատահական չէ, որ երբեմն աշխարհական մեծազարուստ ամիրաները պատրիարք չէին ընտրում, իրենք էին համարվում աթոռակալ և օգտվում էին պատրիարքին տրվող բոլոր իրավունքներից: Սուլթանական կառավարությունը շահազրգույթ էր լինում այս փոփոխություններում, քանզի յուրաքանչյուր նման դեպքում կառավարությունը որոշակի դումար էր գանձում:

67 Աման, էման—մուսուլմանների կողմից հաղթված քրիստոնյաներին՝ ներում:

68 Ձիմմի—միջնադարում այսպես էին անվանում Օսմանյան կայսրության ոչ մահմեդական հպատակներին: Այստեղ՝ հավանաբար նկատի ունի իր հակառակորդ հույն հոգևորականներին: